ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շահերի բախման բացակայության մասին

Գ.Կարբի «26» Հոկտեմբերի 2021թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս, <<ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի կարիքների համար 100կվտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների ձեռք բերման նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ռոլանդ Հակոբյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Զորիկ Ամիրյան**

_____ **Դավիթ Նանյան**

_____ **Մխիթար Հայրապետյան**

Գնումները համակարգող՝ _____ **Արա Բաղդասարյան**

Արձանագրություն N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբիի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ.Կարբի **«26» Հոկտեմբերի 2021թ.**
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ **Ռոլանդ Հակոբյան**–Կարբի համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝ **Զորիկ Ամիրյան** – Կարբի համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Դավիթ Նանյան– «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն»ՀՈԱԿ-ի տնօրեն
Մխիթար Հայրապետյան- Կարբիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Գնումները համակարգող՝ **Արա Բաղդասարյան**

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Գնման առարկայի նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի կարիքների համար հայտարարված **ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է

ՀՀ դրամ

1	**Կարբի համայնքի կարիքների համար 100կվտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների**	**53506540**

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի **Կարբիի համայնքապետարանի** կարիքների համար կազմակերպված **ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան Դավթաշեն 3-րդ թաղամաս 12/3 Երևան0054 հեռ 011208086 e:mail Info@arpisolar.am

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը բացառությամբ «ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի

«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ -ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտով չի ներկայացվել սահմանված հայտի ապահովումը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի ե պարբերության, մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում, հայտի ապահովում: Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.1 կետի համաձայն Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է **բանկային երաշխիքի (հավելված 3)** կամ **կանխիկ փողի ձևով**, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Միաժամանակ ընթացակարգի հրավերի Հայտի ապահովման բանկային երաշխիքի (հավելված 3) օրինակելի ձևի 5-րդ կետով սահմանվել է, որ երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը **/համապատասխան բանկը/** երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին **/baghdasaryan@inbox.ru/:**

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը՝ ընդ որում պահանջվող /շտկված/ փաստաթուղթն՝ բանկային երաշխիքի (**baghdasaryan@inbox.ru**)կամ **կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը,** բնօրինակ տարբերակով անհրաժեշտ է մինչև կասեցման ժամկետի ավարտը **/27.10.2021թ ժամը 17:00./** ներկայացնել «**ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10**» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Ա,Բաղդասարյանին (agnumner@mail.ru), **Գ.Կարբի 3-րդ փողոց թիվ 1 վարչական շենք** հասցեով:

Միաժամանակ անհրաժեշտ է սահմանված ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ երաշխիքը թողարկող բանկի կողմից երաշխիքի 5-րդ կետով սահմանված ծանուցման ներկայացման ուղղությամբ:

4.2 27.10.2021թ-ի դրությամբ մասնակցի ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին
«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ	44162550	8832510	52995060

*6.**Չկայացած չափաբաժինների վերաբերյալ**:*

Չկայացած չափաբաժիններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ – 0

*7.**Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել**:*

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

8.1 27.10.2021թ կայացած գնահատող հանձաժողովի նստում, ընդհանուր գնային առաջարկների հիման վրա **ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/10** ծածկագրով. ներկայացված ընդհանուր գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվում **«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ-ն**, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

8.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանված կարգով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագիր կնքելու մասին:

8.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրված մասնակցի հետ համապատասխան պայամանագիր կնքելու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ռոլանդ Հակոբյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Զորիկ Ամիրյան**

_____ **Դավիթ Նանյան**

_____ **Մխիթար Հայրապետյան**

Գնումները համակարգող՝ _____ **Արա Բաղդասարյան**